

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մեղեսիկի, սուտակի, բալի և զմրուխտի գոյներով բոցավառ, յաւերժական փառքի պսակը գլխուն, Ս. Երկրի ժայռուտ ու փոշոտ Սիրոն լեռան կատարին կախարդանքի նման կանգնած է Երուսաղէմի ու հայութեան պարծանք՝ Հայ Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Մայրավանքը, որ կը տիրապետէ իր արեւելքն ու հարաւը գտնուող հին քաղաքին մնացեալ մասերուն:

Հաստատութեան մը, այս պարագային աւելի ճիշդ պիտի ըլլար գործածել կրօնական հաստատութեան մը, ոյժին կամ հմայքին գաղտնիքը պէտք է փնտռել անոր մտաւոր և հոգեւոր մշակոյթին մէջ: Շատեր կը տարուին տուեալ հաստատութեան մը մեծութիւնը տեսնել անոր նիւթական կամ կալուածական հարստութեան մէջ: Բայց իրականութեան մէջ այս երկուքին մեծութիւնը կը չափուի անոնց՝ այդ հաստատութեան անդամներուն կամ հետեւորդներուն մատուցած սկզբունքներուն, արժէքներուն և գաղափարներուն մէջ, և իսկապէս այս է որ կը պարզէ անոնց երկարակեցութեան գաղտնիքը:

Ամէն կասկածէ վեր է, որ իրենց գոյութիւնը դարեր շարունակ պահող հաստատութիւններ եղած են իրա՛ն հոգիի և հոգեկանի տէր հաստատութիւններ և Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը այդ ճշմարտութեան լաւագոյն ապացոյցն է, և այս պարագային միայն արդար պիտի ըլլար պարտ ու պատշաճ յարգանքի տուրքը ընծայել այս Սրբազան Հաստատութեան, որ 1600 տարիներ առաջ օտար ամերիկացի վրայ արմատ նետած հաստատութիւն մը եղած է ու արժանացած Ս. Երկրի օրհնութեան, որուն համար ալ ամբողջ 16 դարեր, հակառակ երբեմն անյարիր պայմաններու հրաշքով իմն քաշկուտած ու պահած է իր գոյութիւնը: Անկասկած ան ունեցած է իր փոթորկոտ ու ամպամած օրերու բաժինը, սակայն միշտ պայծառ ու արեւոտ օրեր չաջորդելով երկարած են անոր օրերը, որպէսզի ան մեր ժողովուրդի, մանաւանդ Սփիւռքի, կեանքին բերէր իր ներդրումն ու խօսքը, ըսելիքը: Եթէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը սնած է ազգին կաթով, միւս կողմէն ան ալ իր կարգին սնուցած ու կենսաւորած է ազգը ի հոգեւորս: Հետեւաբար, տակաւին այն հազուագիւտ անհատները, որոնք տակաւին կը հաւատան այս Հաստատութեան ու հաւատարմօրէն թեւ ու թիկունք կը կենան անոր, իրականութեան մէջ անոնք սատար կը հանդիսանան Հայ ժողովուրդին:

Հաստատութեան մը տարեգարծի կամ տուեալ ամեակի մը տօնակատարութիւնը առիթ մը պէտք է դառնայ անոր նոր սերունդի անդամներուն, որ անոնք յետադարձ հայեացք մը նետեն իրենց տան անցեալի պատմութեան և պայմաններուն վրայ, որոնք ձեւաւորեցին և կերտեցին զայն, աւելին՝ ատիկա նաեւ կրնայ նոր և ազդու միջոց մը ըլլալ, որ այդ հաստատութեան անդամները վերանորոգեն իրենք զիրենք իրենց նախնիքներու տեսիլք-հրաշքով:

Հետաքրքրականօրէն, 2018 թուականը երեք յոյժ կարեւոր ամեակներու տարի մըն է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան համար, որոնք յարմար ժամանակներու պիտի նշուին.

ա.- Սիրոն պաշտօնաթերթի Նոր շրջանի 90-ամեակը

բ.- Ժառանգաւորաց Վարժարանի հիմնադրութեան 175-ամեակը, և

գ.- Սրբոց Յակոբեանց Տպարանի 185-ամեակը, որ Ս. Երկրի առաջին տպարանը եղած է:

Ու մինչ կը պատրաստուինք նշել այս երեք տարեդարձները, թող մեր ժողովուրդը ի Սփիւռս աշխարհի հարց տայ ինքզինքին թէ որքանով ինք հաւատարիմ մնացած է իր նախահայրերու նուիրումութեան՝ հանդէպ այս Հաստատութեան, որ դարերով բոլորովին կտրուած Հայ աշխարհէն և իրականութենէն, յաջողեցաւ իր գոյութիւնը պահել պատիւով: Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին միջոցաւ էր, որ աշխարհ ծանօթացաւ Հայուն և Հայութեան և տակաւին կը շարունակէ:

Երբ մենք կը նայինք հայելիին, պատկերը՝ որ կ'արտացոլայ մերն է, այն ինչ որ ենք այսօր: Սակայն ան միաժամանակ կ'արտացոլացնէ թէ ինչ եղած ենք մենք ժամանակին: Թէեւ արտաքին երեւոյթը կը փոխուի սակայն ներքնապէս մենք նոյնն ենք: Եւ հիմա երբ այս Սրբազան Հաստատութիւնը կը պատրաստուի նշել երեք յոյժ կարեւոր տարեդարձները, մենք՝ անդամները այս Միաբանութեան, պարտինք հարց տալ մենք մեզի թէ արդեօք մենք տակաւին նոյնն ենք և կը շարունակենք հաւատարմօրէն պահել մեզի աւանդ մնացած մեր պարտականութիւնները, թէ կ'անտեսենք և մոռացութեան կու տանք այն ինչ որ սրբութիւն էր մեր նախնիքներուն և անբաժան մասը անոնց կեանքին:

Ն.Ա.Մ.

